ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«06» 02 2026թ.
№ ԿՊԵՍՄ2/199

«ՔԱՐՀԱՏ» ՄԵՔԵՆԱ ՓԲԸ-ին
ՀՎՀՀ 05526834
ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Երևանյան
խճուղի 145/9
Հեռ. +374 94182422
էլ. հասցեն՝ karatmachine@rambler.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՔԱՐՀԱՏ» ՄԵՔԵՆԱ ՓԲ ընկերության միջև 24.09.2025թ. կնքված N ՀՄԱԱՊՁԲ-25-10/3-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՔԱՐՀԱՏ» ՄԵՔԵՆԱ ՓԲ ընկերությունը 2025թ. 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2025թ.-ը պետք է մատակարարեր 60 հատ ննջասենյակի կահույք (Թախտ կիսափափուկ մետաղյա կարկասով /էսքիզ 1/, որոնց մասով Պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան «ՔԱՐՀԱՏ» ՄԵՔԵՆԱ ՓԲ ընկերության կողմից 40 հատ ննջասենյակի կահույք (Թախտ կիսափափուկ մետաղյա կարկասով /էսքիզ 1/, ապրանքների մատակարարում չի իրականացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի): ՀՀ պաշտպանության նախարարությունը 2026թ. փետրվարի 6-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Տեղեկացնում ենք, որ «ՔԱՐՀԱՏ» ՄԵՔԵՆԱ ՓԲ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 6,440 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 01.01.2026թ. և 6,900 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 138,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 207,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2026թ. փետրվարի 16-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 138,000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 207,000 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ՔԱՐՀԱՏ» ՄԵՔԵՆԱ ՓԲ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2026թ. փետրվարի 16-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2073 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ